ՄԱՍ Դ

ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍՏ

ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ ԸՍՏ ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ

Արմինե Զոհրաբյան
Հայաստանի պատմության
թանգարան
DOI: 10.54503/978-5-8080-1550-0-297

Դրամագիտությունն ունի պատմական գործընթացներում սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական, գաղափարախոսական հարցերն ուսումնասիրելու իր մեթոդաբանությունը: Պատմության բազմաթիվ շրջադարձային փուլեր հաճախ սկսվել են դրամների պատկերագրության փոփոխությունից՝ ձևավորելով գաղափարախոսությունն արտացոլող խորհրդանիշների կանոնիկ բնույթը: Դրամներն օբյեկտիվ աղբյուր են նաև միջնադարյան դավանաբանական խնդիրները՝ կայսրությունների քաղաքականության համատեքստում քննելու առումով:

Միջնադարյան դրամները, որպես քարոզչության, միջոց արտացոլում են արևմտյան և արևելյան քաղաքակրթությունները ներկայացնող երկու համաշխարհային կրոնների՝ քրիստոնեության և իսլամի միջև գոյություն ունեցող ինչպես հակասությունները, այնպես էլ մշակութային փոխազդեցությունները: Պատկերների արգելքը և, հակառակը, դրանց կիրառումը քրիստոնյա և իսլամական քաղաքակրթությունների պայքարի յուրատեսակ դրսևորում է դառնում ամբողջ միջնադարում:

Պատմական ասպարեզ իջած նոր ուժի համար, որը միշտ ուղեկցվում է իրավաժառանգորդության, իշխանության օրինականության ու միջազգային ճանաչման հիմնախնդիրներով, պատկերը, խորհրդանիշը ձեռք է բերում առանձնակի նշանակություն: Հատկապես դրամաթողարկումը և դրամի պատկերագրությունն են հանդիսանում նոր իշխանության լեգիտիմությունը քարոզող և ամրագրող

միջոց, որոնք արտացոլում են նոր իշխանության ոչ միայն գաղափարախոսությունը, քաղաքական հավակնությունները, այլև կապը նախորդ կառավարող ուժի հետ: «Դրամի պատկերագրությունն արտացոլում է ոչ միայն առանձին տիրակալի, այլև նոր արքայատոհմի գերիշխանության հաստատումը, որը դրան հասել էր ապստամբության և բռնազավթման ճանապարհով»[1]:

Բարբարոսական ցեղերը, Ե դարում ավերելով կայսրության մայրաքաղաք Հռոմը, իրենց ատելությունն ուղղում էին քանդակի դեմ, կոտրում և ոչնչացնում այն: Նրանք, ի հակակշիռ հռոմեական կայսրական արվեստի, վերածնեցին կելտական, գերմանական ցեղերի զարդանախշային և գազանային ոճը: «Այս արվեստը հոգեհարազատ էր Եվրոպան բնակեցրած կելտական ցեղերին՝ արթնացնելով նրանց մեջ սեփական վաղ անցյալը, այսպես կոչված «լատենական» կամ ուշերկաթեդարյան մշակույթը (Ք.ա. Զ–Բ դդ.), երբ արվեստում կենդանիների և բույսերի տարբեր ձևերը տարալուծվում են զարդանախշի մեջ: Հաստատվում է «ինքնագործ» դեկորատիվ կիրառական արվեստ՝ հակառակ պրոֆեսիոնալի, «ֆիգուրայինի», որը փառաբանում էր կայսրերին: Հռոմեական ժառանգության դեմ պայքարը արտացոլում էր ստրուկների և ազատագրված ցեղերի բողոքը, որոնք կոտրում էին իրենց ճնշողների և կեղեքողների, ինչպես նաև նրանց աստվածների արձանները»[2]:

Դրա հետ միասին, բարբարոսական թագավորությունները, ընդհուպ մինչև Ը դ., թողարկել են հռոմեաբյուզանդական դրամների ընդօրինակություններ՝ պահպանելով նույն պատկերագրությունը՝ իրենց համար «ատելի» կայսրերի պատկերներով և անուններով (նկ. 1):

Ուշ հռոմեական և վաղ բյուզանդական դրամների վրա չկան Քրիստոսի կամ սրբերի պատկերներ: Դիմերեսին բացառապես կայսրերի պատկերներն են, դարձերեսին կա՛մ խաչ է, կա՛մ Քրիստոսի մենագիրը (Chi-Rho քրիստոգրամ), կամ լաբարում՝ խաչի պատկերով: Կոստանդիանոս Մեծը (306–337) Քրիստոսի մենագի-

---

[1] **Тревер** 1939, с. 275.
[2] **Любимов** 1982, с. 14–15.

ը, որն, ըստ ավանդության, երևացել է կայսեր տեսիլքում որպես նրա հաղթանակի նախանշան[3], պատկերել է միայն պղնձե դրամներին (նկ. 2): Խաչի պատկերով ամենավաղ դրամները թողարկել է Աքսումի թագավոր Էզանասը (330–358)[4] (նկ. 3): Հռոմի կայսր Վալենտիանոս Ա-ը (364–374) իր ոսկի դրամներին՝ հատված Անտիոքում, առաջին անգամ պատկերեց խաչ (նկ. 4):

Քրիստոնյա կայսրերը երկար ժամանակ պահպանեցին հռոմեական դրամների դարձերեսի պատկերագրությունը Վիկտորիայի պատկերով, սակայն աստվածուհու ձեռքի խորհրդանիշները՝ պսակը, ճյուղը փոխարինեցին խաչակիր գավազանով: Կարելի է թևավոր Վիկտորիային ներկայացնել պարզապես որպես հրեշտակ, սակայն պատկերին ուղեկցող գրությունը՝ VICTORIA AVGVSTORVM (Հաղթած կայսր) հիմք է տալիս մտածել, որ պատկերի տակ «թաքնված է» հենց Հաղթանակ/Վիկտորիան[5] (նկ. 5): Դարձերեսի պատկերագրությունը ենթադրում էր ուղղափառ քրիստոնեության հաղթանակը կայսրության ինչպես արտաքին, այնպես էլ ներքին թշնամիների, հատկապես աղանդավորական շարժումների նկատմամբ, որոնք միշտ Բյուզանդիային մեծ խնդիրների առաջ են կանգնեցրել: Հուստինոս Բ կայսրը (565–578) ոսկե դրամի դարձերեսին պատկերեց Կոստանդնուպոլիսը՝ գահին բազմած կանացի ալեգորիկ պատկեր (նկ. 6): Մայրաքաղաքը մարմնավորող պատկերը պայմանավորված էր նրանով, որ կայսրը կորցրել էր իր նախորդի՝ Հուստինիանոս Ա-ի (527–565) նվաճած տարածքները Արևմուտքում և իր ուշադրությունը կենտրոնացրել էր Կոստանդնուպոլիսը բարեկարգելու վրա:

Տիբերիոս Բ կայսեր օրոք (578–582) Վիկտորիայի պատկերի փոխարեն դրամի դարձերեսին հանդես է գալիս աստիճանաձև հիմքին կանգնեցված մեծադիր զորավոր խաչը՝ խորհրդանշելով Քրիստոսի խաչելության վայր Գողգոթան (նկ. 7):

---

[3] **Донини** 1989, с. 218.

[4] **Higel** 2003, p. 3.

[5] Բյուզանդիայի կայսրեր, ընդհուպ մինչև Կոստանդին Ե-ը (741–775), պահպանեցին դարձերեսի այս գրությունը, որն ի հայտ է եկել Հռոմում դեռևս Ա դարում:

Վաղ շրջանում Քրիստոսի պատկերումը դրամների վրա հանդիպում է միայն հատուկ առիթներով թողարկումներում: Դրանցից առաջինը Մարկիանոս կայսեր (450–457) և Պուլխերիայի, մյուսը՝ Անդրիանոսի (491–518) և Արիադնեի ամուսնության առիթով թողարկված սոլիդներն են: Այդ դրամների դարձերեսին Քրիստոսը կանգնած է կայսրական զույգի միջև՝ օրհնելով նրանց ամուսնությունը: Նման պատկերագրությունը քրիստոնյա աշխարհում լայն տարածում ուներ, որի մասին վկայում են ամուսնական մատանիները, մեդալիոնները և այլն[6]:

Արծաթե դրամը քարոզչության գործիք

Դրամը որպես քարոզչության միջոց հաճախ իր արտացոլումն է գտնում ոչ միայն պատկերագրության, այլև դրամի մետաղի մեջ: Արծաթի և ոսկի դրամների թողարկման խնդիրը եղել է Արևելքի և Արմուտքի պայքարի յուրատեսակ դրսևորում: Ալեքսանդր Մակեդոնացուց սկսած Արևմուտքը ոսկու, իսկ Արևելքը արծաթի ստանդարտի տարածաշրջան է եղել: Սակայն ինչպես Արևելքն էր պարբերաբար ձգտում զբաղեցնել Արևմուտքի տեղը որպես ոսկու տարածաշրջան, այնպես էլ Արևմուտքն էր արծաթի թողարկմամբ պարբերաբար ձգտում նվազեցնել իր ոսկու արտահոսքը Արևելք: Ե դ. Բյուզանդիայի և Սասանյան Իրանի միջև կնքված փոխադարձ համաձայնությամբ տարածաշրջանը բաժանվում է դրամական շրջանառության երկու ոլորտի, համապատասխանաբար միմյանց լրացնող երկու դրամական համակարգով, Արևմուտքում հաստատվում է ոսկու, իսկ Արևելքում՝ արծաթի ստանդարտ[7]:

Ամբողջ Զ դ. Բյուզանդիան արծաթե դրամներ թողարկել է միայն հատուկ առիթներով[8]: Դրանց դարձերեսին հաճախ պատկերված է կայսրը՝ լուսապսակով, որը հավանաբար ընդգծում է Բյուզանդիայի կայսեր սրբազնությունը՝ որպես Քրիստոսի փոխանորդ

---

[6] **Հովհաննիսյան** 2014, էջ 62:
[7] **Meц** 1973, p. 376:
[8] **Grierson** 1968, p. 17.

երկրի վրա (նկ. 8)։ «Չորրորդ դարի վերջում արդեն կայսրը սուրբ էր, ապրում էր Սրբազան պալատում՝ սուրբ արարողությամբ շրջապատված և, քանի դեռ արժանի էր, հարգվում էր որպես Աստծո Փոխանորդ»[9]։ Արևելքում Բյուզանդիան ընդհանրապես արծաթե դրամներ չի թողարկել՝ պահելով Պարսկաստանի հետ Ե դ. կնքած համաձայնագրի պայմանները։ Իրավիճակը փոխվում է Է դարում։

614 թ. պարսկա-բյուզանդական պատերազմի ժամանակ Սասանյան Խոսրով Բ-ի (590–628) զորքերը մտնում են Երուսաղեմ և գերության տանում խաչափայտը։ 615 թ. Բյուզանդիայի կայսր Հերակլեոսը (610–641) մտցնում է ծանր քաշի նոր արծաթե դրամ հեքսագրամը (վեց գրամար), որի տեսական քաշն է 6.82 գ.[10] (նկ. 9)։ Դրամի դիմերեսին պատկերված են Հերակլեոսը որդու՝ Հերակլեոս Կոստանդինի հետ։ Դարձերեսին Զորավոր խաչը՝ աստիճանաձև հիմքի վրա։

Հերակլեոս կայսրը (610–641), արծաթե նոր տիպի դրամներ թողարկելով, դրանք դարձրեց քարոզչության կարևոր գործիք, որով ընդհարումը Պարսկաստանի հետ ձեռք էր բերում «սրբազան պատերազմի» նշանակություն։ Հերակլեոսի թողարկած արծաթե հեքսագրամը, որի դարձերեսին աստիճանաձև հիմքին պատկերված խաչը խորհրդանշում էր Գողգոթան և Քրիստոսի խաչափայտը, նշանավորում էր նոր պայքարի սկիզբ՝ Սուրբ խաչը Երուսաղեմ վերադարձնելու համար։ Դա է վկայում հեքսագրամի դարձերեսին հայտնված գրությունը. «Թող Աստված օգնի հռոմեացիներին»։ Խաչափայտը հաջողվեց վերադարձնել միայն 628 թ.՝ Հերակլեոսի ձեռնարկած հաջող ռազմական արշավանքների արդյունքում։ Սակայն հեքսագրամները մնացին շրջանառության մեջ նաև Հերակլեոսից հետո՝ մինչև Հուստինիանոս Բ-ը։ Նույն 628 թ. Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև հաշտություն կնքվելուց մոտ մեկ ամիս անց դավադրաբար սպանվեց Խոսրով Բ-ը՝ երկիրը թողնելով տնտեսական և քաղաքական ծանր կացության մեջ։ Կտրուկ նվազեց սասանյան արծաթե դրամների թողարկումը, որը հավանաբար

[9] **Runciman** 1975, p. 17.
[10] **Grierson** 1968, p. 18.

հույսեր էր ներշնչում Բյուզանդիային, թե հատկապես իր արծաթե դրամը իշխող կդառնա Արևելքում: Դրան խանգարեցին արաբական նվաճումները, երբ արաբներն իրենց գրված տարածքները բաժանեցին երկու ոլորտի. Բյուզանդիայից վերցված տարածքներում շրջանառվում էին ոսկե և պղնձե արաբ-բյուզանդական, իսկ նախկին պարսկական տարածքներում՝ արաբ-սասանյան արծաթե դրամները:

Պատահական չէր նաև հեքսագրամի քաշի ընտրությունը, որը կրկնում էր աստվածաշնչյան սրբազան սիկղի քաշը՝ դրամին հաղորդելով բացառիկ սրբազան նշանակություն: Հրեական կշռադրամային համակարգին վերաբերող աղբյուրները ընդհանուր շեքել/սիկղ անվան տակ ներկայացնում են ստատերը կամ տյուրոսյան տետրադրախման՝ մոտ 13.5 գ. քաշով, իսկ սրբազան շեքել/սիկղի տակ կես շեքելը կամ դիդրախման (հայկական աղբյուրներում՝ դիդրաքմե/երկդրամեան[11])՝ 6.75 գ.[12]: Սրբության սիկղը կամ կես շեքել/դիդրախման, ըստ Աստվածաշնչի, տաճարին նվիրաբերվող դրամն էր. «Երբ նրանք Կափառնայում եկան, երկդրամեան տուրքը պահանջողները մոտեցան Պետրոսին և ասացին. «Ձեր վարդապետը երկդրամեանը չի՞ տալիս»: Նա դիմեց Քրիստոսին, որը պատասխանեց. «Գնա՛ ծով ու կարթ գցի՛ր, և առաջին Ձուկը, որ դուրս կելնի, վերցրո՛ւ ու բա՛ց նրա բերանը և մի սատեր (ստատեր) կգտնես. ա՛ռ այն և իմ ու քո փոխարեն նրանց կտաս»[13]:

Ըստ Ֆ. Գրիերսոնի, Հերակլեոսը թողարկելով հեքսագրամը, «վերակենդանացրեց» հին դիդրախման[14]: Վերջինս Դիոկղետիանոս կայսեր բարեփոխումներից հետո Արևելքում հարկային գանձվող դրամական միավորն էր: Դիդրաքմեն, որպես գլխահարկի դիմաց գանձվող դրամ, հիշատակում է Մովսես Կաղանկատվացին. «Սովորութեան աշխարհագրի Պարսից թագաւորութեան զգլխահարկ զդիդրաքմա»[15]:

---

[11] **Վարդանյան** 1983, էջ 232:
[12] **Shmitt-Korte**, **Price** 1994, p. 126–127.
[13] Մատթ. ԺԷ, 24–27:
[14] **Grierson** 1968, p. 17.
[15] **Մովսէս Կաղանկատուացի** 2010, էջ 220:

Հեքսագրամը նշանակում է նաև վեցթևանի աստղ, որն առաջանում է հունարեն I(Ιησούς) և X(Χριστός) տառերի համադրումից: Այս խորհրդանիշը լայնորեն տարածված էր վաղ բյուզանդական արվեստում (նկ. 11): Հեքսագրամը՝ միաժամանակ նաև որպես Դավթի աստղը խորհրդանշող բառ, ընդգծելու էր Բյուզանդիայի կայսեր և Դավիթ թագավորի ու նրա սերնդի կապը Քրիստոսի հետ[16]:

Հեքսագրամը և՛ իր խորհրդանշական քաշով, և՛ պատկերագրությամբ, և՛ դրամի անվան զույգ նշանակությամբ, քարոզում էր բյուզանդական բանակի առջև դրված սրբազան նպատակը: Այն է՝ պայքարել և պարսկական գերությունից ազատել Քրիստոսի խաչափայտը՝ վերադարձնելով այն Երուսաղեմ:

Պատկերամարտության շրջանում նույնպես, առաջին հերթին, արծաթե դրամները դարձան նոր քաղաքականության քարոզչության միջոց, ինչպես Է դ. հեքսագրամները: Հեքսագրամին փոխարինեց արծաթե նոր դրամական միավոր միլիարեսիոնը, առանց դիմերեսի կայսեր պատկերի: Պատկերամարտ առաջին կայսր Լևոն Գ-ի (717–741) մտցրած միլիարեսիոնում զորավոր խաչը տեղափոխվեց դիմերես, իսկ դարձերեսին տեղ գտավ արաբական դրամի ոճը հիշեցնող գրություն (նկ. 12): Առանց պատկերների արծաթե դրամի թողարկումը, հնարավոր է, փորձ էր մրցակցել օրեցօր արծաթե դիրհեմների թողարկման մեծ ծավալներ իրականացնող Արաբական խալիֆայության հետ:

Ջ. Մայլսը նշում է, որ «Բյուզանդական արծաթե դրամը կրում է զորավոր խաչը՝ աստիճանաձև հիմքի վրա և քրիստոնեական գրություններ՝ խառը լատիներեն, հունարեն տառերով, այն դեպքում, երբ արաբական դրամը միայն գրություններով է և քուֆի տառերով, սակայն դրանց թողարկումը, ընդհանուր ոճը, երկուսի մոտավոր քաշը և չափը արտառոց նման են»[17]: Ջ. Մայլսը հիմնավորում է կապը արաբական դիրհեմի և բյուզանդական միլիարեսիոնի միջև այն փաստով, որ բյուզանդական արծաթե միլիարեսիոնը հաճախ խփված է արաբական դիրհեմի վրա: Չեն հանդիպում արաբական դրա-

---

[16] **Զոհրաբյան** 2021, էջ 111:
[17] **Miles** 1960, p. 189.

մի վրա խփված Լևոն Գ-ի միլիարեսիոններ: Դրանք վերաբերում են Կոստանիդին Ե-ի և Լևոն Դ-ի, Լևոն Դ և Կոստանիդին Զ-ի, Կոստանիդին Զ-ի և Իրենեի (նկ. 13), Թեոփիլոսի և Միքայել Գ-ի որոշ թողարկումներին, որոնց տակ ակնհայտ նկատվում են արաբական դրամի հետքեր[18]: Ամենայն հավանականությամբ սկսած Կոստանդին Զ-ից նկատվում է արծաթի սղություն, քանի որ վերջին օմայանները և հատկապես աբբասյանները արծաթե դրամների թողարկումը հասցրեցին մեծ չափերի, որոնց հետ միաժամանակ ոսկի և արծաթ թողարկող Բյուզանդիան ի վիճակի չէր մրցել: Պատկերամարտության ամենածանր հետևանքներից էր նաև, որ 781 թ. կայսերական դրամները դադարեցին հատվել Հռոմում: Հռոմի պապը լիովին թեքվել էր ֆրանկների կողմը: Նա 800 թ. Սբ. Պետրոսի տաճարում Հռոմի կայսր է օծում Կարլոս Մեծին[19]:

Պատկերամարտության շրջանում թողարկված բյուզանդական արծաթե միլիարեսիոնը ավելի թեթև էր կշռում, քան արաբական դիրհեմը, որը նույնպես նվազեցնում էր բյուզանդական արծաթի մրցակցության աստիճանը արաբական արծաթի նկատմամբ: Այդ մասին են վկայում դրամական գտածոները:

Չնայած Հյուսիսային և Արևելյան Եվրոպայում քննվող ժամանակաշրջանում դեռևս չէր ձևավորվել սեփական դրամական տնտեսություն, սակայն այդ տարածքները ընդգրկվել էին միջազգային առևտրի ոլորտ: Ը-Ժ դդ, Հյուսիսային և Արևելյան Եվրոպայում արծաթն ընդունվում էր պարզապես որպես փող, անկախ նրանից դա մետաղադրամ էր, թե զարդ: Այդ տարածքներում գերմանական պֆեննինգներին համահավասար լայնորեն շրջանառվում էին արաբական արծաթե դրամները: Բյուզանդական դրամներն այդ ժամանակաշրջանին վերաբերող գանձերում տոկոսային առումով ամե-

---

[18] **Miles** 1960, p. 194.

[19] 793 թ. Կառլոս Մեծը (768–814), որի ժամանակաշրջանը համընկնում է պատկերամարտության շրջանին, իրականացրեց դրամական բարեփոխում և շրջանառության մեջ մտցրեց արծաթի ավելի ծանր քաշի դրամներ՝ դենիեդենարը դարձնելով հիմնական շրջանառվող միջոց: Պետք է ընդգծել, որ Կառլոսի դրամները նույնպես առանց պատկերների են: Դրանց դիմերեսին խաչի պատկեր է, իսկ դարձերեսին՝ Կառլոսի անվան մենագիրը:

նափոքր և ոչ էական խումբն են կազմում և հայտնաբերվում են միշտ արծաթե զարդերի հետ[20]: Դա ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ բյուզանդական միլիարեսիոնները լայն թողարկում չեն ունեցել և նախատեսված են եղել ավելի շուտ ներքին շրջանառության համար որպես գաղափարակիր նոր երևույթ: «Նման դեպքերը ցույց են տալիս, որ միլիարեսիոնը ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական արժեք ուներ՝ որպես հասարակական հեղինակություն և կարգավիճակ ներկայացնող առարկա: Հավանաբար այդ պատճառով է, որ բյուզանդական արծաթե դրամները Սկանդինավիայում շատ սահմանափակ շրջանառություն են ունեցել»[21]:

Առ այսօր Հայաստանի տարածքում չեն հայտնաբերվել պատկերամարտության ժամանակաշրջանի բյուզանդական ոչ միայն արծաթե, այլ նույնիսկ ոսկի դրամներ: Դա, անշուշտ, բացատրվում է նրանով, որ Հայաստանն այդ շրջանում ամբողջովին ընդգրկված էր Արաբական խալիֆայության դրամական տնտեսության ոլորտ: Ավելին, այդ շրջանում ոչ միայն արաբական դրամներն էին շրջանառվում Հայաստանում, այլև Հայաստանի մի քանի քաղաքներում գործում էին դրամահատարաններ, որտեղ հատվում էին օմայան, այնուհետև աբբասյան կանոնավոր թողարկումներ:

«Պատկերների պատերազմը» Բյուզանդիայի կայսր Հուստինիանոս Բ-ի (685–695, 705–711) և Օմայան խալիֆ Աբդ ալ-Մալիքի (685–705) միջև

Անդրե Գրաբարը ժամանակին նշել է, որ Ը-Թ դդ. Բյուզանդիայում տարածված պատկերամարտության վեճերի ակունքը՝ «պատկերների պատերազմն էր» հռոմեական կայսր Հուստինիանոս Բ-ի (685–695, 705–711) և խալիֆ Աբդ ալ-Մալիքի (685–705) միջև[22]: Այս պատերազմի հիմնական զենքը դարձավ երկու կողմերի փոխկապակցված դրամական բարեփոխումը՝ ծնելով արմատապես նոր

[20] **Androshchuk** 2019, p. 55.
[21] **Androshchuk** 2019, p. 88.
[22] **Grabar** 1957, p. 77–84.

խնդիրներ: Հուստինիանոս Բ-ը թողարկեց առաջին բյուզանդական դրամը Քրիստոսի կիսանդրիով, իսկ Աբդ ալ-Մալիքը ներկայացրեց «Կանգնած խալիֆ» տիպի ոսկի և պղնձե դրամները: Խալիֆի ոսկե այս դրամների թողարկումը թվագրվում է հիջրայի 74–77 թթ. (693–697 թթ), այսինքն՝ Հուստիանոսի կողմից Քրիստոսի պատկերով դրամների թողարկումից անմիջապես հետո[23]: «Պատկերների հակամարտությունն», անկասկած, ընթանում էր շատ սուր խալիֆ Աբդ ալ-Մալիքի և Հուստինիանոս Բ-ի դրամների թողարկումների միջոցով՝ այս կայսեր առաջին գահակալության տարիներին:

Հուստինիանոս Բ-ի առաջին գահակալության շրջանում (685–695) կայսեր գործողությունները ուղղված էին Բյուզանդիայի դիրքերի ամրապնդմանը՝ ինչպես ներսում, այնպես էլ դրսի իր դաշնակիցների և թշնամիների շրջանում: 688 թ. նա կնքեց նոր պայմանագիր արաբների հետ, որի համաձայն խալիֆ Աբդ ալ-Մալիքը պարտավորվում էր օրական վճարել հազար դահեկան հարկ[24]: Խալիֆը ստիպված էր ընդունել այդ պայմանը, որպեսզի կարողանար ողջ ուժերը նետել խալիֆայության ներսում գլուխ բարձրացրած կենտրոնախույս ուժեր դեմ: Աբդ ալ-Մալիքի օրոք թեժացել էր հակամարտությունը Դամասկոսի՝ օմայան խալիֆի և Մեքքայի, այսինքն արաբների բնօրրանը ներկայացնող ուժերի միջև, որն առաջնորդում էր հակախալիֆ Աբդուլլահ իբն Զուբայրը: Վերջինիս կողմնակիցներն օմայաններին համարում էին իսլամից հեռացած և Մուհամեդին դավաճանած իշխանություն՝ գտնելով, որ, Դամասկոսը մայրաքաղաք դարձնելով, օմայանները հավակնում էին ներկայանալ իբրև Արևելքի աշխարհիկ տիրակալներ՝ մելիքներ[25]: Իբն Զուբայրը իր նստավայրն էր դարձրել մահմեդականների հոգևոր կենտրոն Մեքքան: Նրա իշխանությունը ճանաչում էին Արաբական թերակղզու ցեղե-

---

[23] **Miles** 1967, p. 206.

[24] **Թեոփանես Խոստովանող** 1983, էջ74:

[25] Այս թեման զարգացրեցին աբբասյան շրջանի մատենագիրները, որոնք օմայաններին, բացառությամբ Օմար Բ-ից, համարում էին աշխարհիկ կառավարողներ, և օմայանների վերացումն ու Մուհամեդի ազգական աբբասյանների իշխանության գալը ներկայացնում որպես «անօրեն արքաների» փոխարինումը «իսկական խալիֆներով, **Бартольд** 1966, с. 17:

ը, Իրաքը և Խորասանը, իսկ Օմայանների վերահսկողության ներքո էին մնացել միայն Ասորիքն ու Եգիպտոսի մի մասը:

Աբդ ալ-Մալիքի կողմից Հերակլեոս կայսեր ոսկե սոլիդների պատկերագրության մեջ մասնակի փոփոխություններ մտցնելը և դրանք մասնակիորեն «իսլամականացնելը» առնչվում է օմայան իշխանության դեմ դուրս եկած «հակախալիֆ» Աբդուլլահ Իբն Զուբայրի գործողությունների հետ[26]: Զորավոր խաչը, որը դրամաթողարկման մեջ քրիստոնեության հիմնական խորհրդանիշն էր դարձել, փոխարինվում է Մարգարեի նիզակով կամ գավազանով, սակայն նույն աստիճանաձև հիմքի վրա, ինչպես որ խաչը պատկերվում էր բյուզանդական դրամներում: Սա առաջին դեպքն է, երբ արաբները ոսկին օգտագործել են իրենց կրոնական ինքնությունը ի ցույց դնելու նպատակով: Ուստի պատահական չէ, որ կարճ ժամանակ անց հերակլեոսյան ոսկե սոլիդներին հայտնվում է իսլամի կարևորագույն խորհրդանիշը՝ շահադան. «Հանուն Ալլահի, Չկա աստված Ալլահից բացի, Մուհամեդը Ալլահի մարգարեն է»[27]: Շահադայի տեղադրումը դրամին արդեն էական առաջընթաց էր, որը վարչաֆինանսական մեծ բարեփոխումների համար ճանապարհ պետք է բացեր (նկ. 14): Հավանաբար Թեոփանեսի հաղորդումը այս դրամների մասին է. «…չընդունեց (Հուստինիանոս Բ-ը – Ա.Զ.) Աբդալմելիքի նոր կտրած, նախկինում շրջանառության մեջ չեղած դրամը: …Աբդալմելիքը, լսելով այդ մասին, սադայելական կեղծավորությամբ կոչ էր անում չվերացնել խաղաղությունը, ընդունել իր դրամը, այնպես, ինչպես արաբները, թեև շրջանառության մեջ չեն ընդունում հռոմեական դրամը, ընդունում են այն որպես քաշով մետաղ: Արաբների նոր դրամ կտրելուց հռոմեացիները ոչ մի վնաս չեն կրում: Կայսրը նրա աղերսը վախի նշան համարեց, չհասկացավ, որ նրանց նպատակը մարդայիտների զորաբանակի լուծարքն էր, խաղաղությունը վերացնելու հարմար առիթի որոնումը»[28]: Այս դրամներն են հավա-

---

[26] Հերակլեոս կայսեր ոսկե սոլիդները թողարկվել են մեծ քանակությամբ և ամբողջ Է դ. ընթացքում լայն շրջանառություն են ունեցել արաբների կողմից նվաճած նախկին բյուզանդական տարածքներում:

[27] **Miles** 1967, p. 210

[28] **Թեոփանես Խոստովանող** 1983, էջ 77:

նաբար սադրել Հուստինիանոս Բ-ին թողարկել Քրիստոսի պատկերով դրամներ, քանի որ Աբդ ալ-Մալիքը շահադայով դրամները թողարկել է ավելի վաղ, մուսուլմանական համայնքն իր շուրջն համախմբելու միտումով:

692 թ. Աբդ ալ-Մալիք խալիֆն ականավոր զորավար ալ-Հաջաջ իբն Յուսուֆին ուղարկում է Հիջազ՝ ճնշելու Աբդուլլահ իբն Զուբայրի ապստամբությունը: Ալ-Հաջաջի կողմից Մեքքայի գրավումը և Իբն Զուբայրի նկատմամբ հաղթանակը, Օմայանների համար ճանապարհ է բացում ողջ մուսուլմանական աշխարհն իրենց իշխանության տակ միավորելու, ինչպես նաև խալիֆի ժառանգական իրավունքը վերջնականապես իրենց տոհմին ամրագրելու համար: Նույն թվականին մահմեդականները, մեղադրելով բյուզանդացիներին պայմանագրի պայմանները խախտելու մեջ, մտան Առաջին Հայք և Սեբաստիայի մոտ ջախջախեցին Հուստինիանոս Բ-ի բանակը:

Վերոհիշյալ իրադարձությունները առիթ հանդիսացան, որպեսզի Հուստինիանոս Բ-ը դրամների միջոցով նոր հակադարձող քայլ անի ընդդեմ արաբների: Բալաձուրին հաղորդում է, որ արաբներն Եգիպտոսի գրավումից հետո պապիրուս էին արտահանում Բյուզանդիա, որի դիմաց վճարվում էին բյուզանդական ոսկե դրամով: Սակայն Աբդ ալ-Մալիք խալիֆը որոշում է պապիրուսների վրա տեղադրել իր Աստծո անունը, մասնավորապես՝ «Նա է միակ Ալլահը» գրությունը: Կայսրը պատասխանում է «Դուք ձեր պապիրուսի գալարների վրա դնում եք բաներ, որ մենք ատում ենք: Եթե դրանից հրաժարվեք, լավ, եթե ոչ, ապա դինարների վրա կգրենք այնպիսի բաներ ձեր մարգարեի մասին, որ դուք կսկսեք ատել»[29]: Հուստինիանոսը հավանաբար իր «սպառնալիքը» իրագործել է Քրիստոսի պատկերով դրամներ թողարկելով, ինչն էլ հավանաբար Բյուզանդացիների և արաբների միջև պայքարը բերել է կրոնական դաշտ:

692–695 թթ. առաջին անգամ Բյուզանդիայի պատմության մեջ թողարկվեցին դրամներ՝ դիմերեսին տեղադրելով Քրիստոսի պատկերը, իսկ դարձերեսին՝ կայսեր պատկերը : Հուստինիանոս Բ-ը ոսկե սոլիդի և արծաթե հեքսագրամի դարձերեսին պատկերված է՝

[29] **Արաբ մատենագիրներ Թ–Ժ դդ.** 2005, էջ 284

ձեռքով բռնած խաչը՝ աստիճանաձև հիմքի վրա, սեմիսիսին՝ երկարաձգված խաչը գնդի վրա, տրեմիսիսին առանձին խաչը[30] (նկ. 15): Քրիստոսը դրամի դիմերեսին, իսկ կայսրը՝ դարձերեսին պատկերելը միանգամայն աննախադեպ երևույթ էր: Հռոմեաբյուզանդական դրամներում դիմերեսը միշտ վերապահված է եղել կայսեր պատկերին: Բնական է, որ կայսեր՝ դիմերեսից հրաժարումը հօգուտ Քրիստոսի պայմանավորված է քաղաքական շարժառիթներով, որը պահանջում էր որոնել գաղափարախոսական նոր լուծումներ: Այդ հարցերը մանրամասն քննել է Ջ. Բրեքենրիջը[31]:

692 թ. գումարվում է Տրուլլոյի Զ եկեղեցաժողովը, որի 82-րդ կանոնը ընդունելի էր համարում Քրիստոսին մարդակերպ ներկայացնելը, արգելելով՝ Աստծու Որդուն գառան կերպարով պատկերելը: «Բյուզանդական դրամների պատկերագրության մեջ բեկումնային պահերից է 82-րդ կանոնի գործնական կիրառումը: Հուստինիանոսը Քրիստոսին պատկերել է տալիս դրամի դիմերեսին՝ ցանկանալով արտահայտել իր բարեպաշտությունը, իսկ իրեն նեկայացնում է դարձերեսին՝ կանգնած, խաչը ձեռքին և ակակիա[32] բռնած: Դրամի շրջագծում «Հուստինիանոս ծառա Աստծո» գրությունն առավել ընդգծում է այդ գաղափարը:»[33]:

Նոր նշանակություն ձեռք բերեցին նաև Հուստինիանոս Բ-ի դրամի դիմերեսի և դարձերեսի գրությունները: Քրիստոսի պատկերն ուղեկցող գրությունն է. «Հիսուս Քրիստոս թագավորների թագավոր» (IhS CRISTOS REX RESNANTIUM), որի գործառույթը պայքարի ճանապարհով հաղթելը չէ, այլ կառավարումը, իսկ կայսրը՝ որպես Քրիստոսի ծառա, դառնում է վերջինիս կառավարումն իրականացնողը երկրի վրա: Քրիստոսն այդ ձևով հիշատակված է

---

[30] Սոլիդ բյուզանդական լիարժեք դրամ, սեմիս՝ սոլիդի ½, տրեմիսիս՝ սոլիդի 1/3:

[31] **Breckenridge** 1959:

[32] Ակակիան (այլ անունն է անեքսիկակիա) կայսրական ծիսական հանդերձանքի մաս: Իրենից ներկայացնում է կտորից տոպրակ՝ հողով լցված, որը Բյուզանդիայի կայսրը հանդիավոր երթերի ժամանակ պահում էր ձախ ձեռքում որպես երկրային անցավոր կյանքի մասին հիշեցում:

[33] **Հովհաննիսյան** 2014, էջ 64–65:

Նոր կտակարանաում. «պահե՛լ քեզ զպատուիրանն, անբիծ՝ անարատ, մինչև ի յայտնութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զոր յիւ՛ր ժամանակս ցուցցէ երանելին, և միա՛յն հզօր, Թագաւոր թագաւորաց, և Տէր տերանց»[34]:

Թագավորների թագավորը[35] կամ արքայից արքան կայսրական տիտղոս է, որը կրել են Արևելքի տիրակալները (Աքեմենյաններ, Սասանյաններ և ուրիշներ[36]): Բյուզանդիան դեռ չէր մոռացել Սասանյանների դեմ պատերազմները, հատկապես Երուսաղեմի գրավումը, որը «ծնեց» հեքսագրամները[37]: Է դ. վերջում արդեն պարզ է դառնում, որ արաբները եկել են դառնալու Արևելքի նոր կայսրություն: Դրամի միջոցով Հուստինիանոսը ցանկանում էր ցույց տալ որ կա մեկ կայսրություն՝ Բյուզանդիան, որի կայսրը թագավորների թագավոր Քրիստոսի տեղապահն է երկրի վրա:

Հուստինիանոսի այս դրամներին ի պատասխան, Աբդ ալ-Մալիքը թողարկեց այսպես կոչված «կանգնած խալիֆ» տիպի ոսկե և պղնձե դրամները: Մենք տեսնում ենք, որ իսլամական աշխարհում պատկերը նույնպես դառնում է քարոզչության միջոց, աշխարհիկի և հոգևորի միջև պայքարի յուրատեսակ դրսևորում[38]: Խալիֆի ձեռքի սուրը խորհրդանշում էր ինչպես քրիստոնյա Բյուզանդիայի դեմ տարած հաղթանակը, այնպես էլ ապստամբ արաբ առաջնորդներին ջախջախելը և ամբողջ արաբական աշխարհը իրեն հպատակեցնելը: Խալիֆի պատկերի շուրջ շահադան է, իսկ դարձերեսին՝ թողարկման տարին:

«Կանգնած խալիֆ» տիպի պղնձե թողարկումներում հանդիպում ենք «Աբդ ալլահ» արտահայտությունը, որը կրկնում է Հուստինիանոս Բ-ի դրամի դարձերեսի գրությունը՝ «Աստծո ծառա»: Սա ևս մեկ

---

[34] Ա. Տիմոթեոս Զ. 14–15:

[35] Բյուզանդացիներն իրենց կայսրերին բասիլևս էին կոչում:

[36] Արքայից արքա տիտղոսը հելլենիստական աշխարհում տես՝ **Варданян** 2011:

[37] **Զոհրաբյան** 2021, էջ 110–111:

[38] Իրականում Ղուրանում խոսք չի գնում պատկերների արգելքի մասին, այդ մասին խոսվում է հադիսներում:

կռվան է, որ արաբ խալիֆը, իր նախառեֆորմյան դրամներում հետևել է բյուզանդական դրամի պատկերագրությանը[39] (նկ. 16):

Ոչ մի այլ դրամ չի նշանավորել Իսլամական համընդհանուր կայսրության ձևավորման շրջադարձային կետն ավելի լավ, քան հայտնի՝ «կանգնած խալիֆի» տիպը: Խալիֆն առաջին անգամ ներկայացնում է իր կայսերական իշխանությունը, ինչպես դա անում էին Բյուզանդական կայսրերը կամ Սասանյան շահնշահերն իրենց դրամների վրա:

Իրագործելով իր առջև դրված նպատակները, որոնք ուղղված էին ներքին և արտաքին թշնամիների դեմ, Աբդ ալ-Մալիքը հրաժարվում է «կանգնած խալիֆ» տիպից և թողարկում է միայն գրություններով ոսկե և արծաթե դրամներ: Օմայան արձանագիր ոսկե դրամների թողարկման սկիզբը Հիջրայի 76 թ. (= 695/96 թ.), իսկ արծաթինը՝ Հիջրայի 77 թ. (=696/97 թ.)[40]: Հետռեֆորմյան դրամներում բացակայում է ոչ միայն պատկերը, այլև խալիֆի անունը: Այդ նորամուծությունը պահպանվեց հետագա մյուս բոլոր օմայան խալիֆների օրոք: Դրամների գրությունները բացառապես կրոնական մեջբերումներ են:

Հուստինիանոս Բ-ը երկրորդ անգամ գահ բարձրացավ 705 թ.: Եթե առաջին կառավարման տարիների (685–695) դրամական թողարկումներում Հիսուսը պատկերված է երկար մազերով և մորուքով, երկրորդ շրջանի (705–711) դրամներում Աստծո Որդին ավելի երիտասարդ է, դիմագծերով հիշեցնում է Հուստինիանոս Բ-ին[41] (նկ. 17):

Ջ. Մայլսը տալիս է երկու կայսրերի՝ Հուստինիանոսի և Աբդ ալ-Մալիքի «պատկերագրական պայքարի» ընթացքում թողարկած դրամների ժամանակագրական հաջորդականությունը: Սկզբում Աբդ ալ-Մալիքը հերակլեոսյան դրամներում տեղադրում է շահադան: Հուստինիանոս Բ-ը դրան պատասխանում է երկար մորուքով Քրիստոսի պատկերով դրամների թողարկմամբ: Նույն ժամանակ խալիֆը թողարկում է «կանգնած խալիֆ» տիպի ոսկե և պղնձե

---

[39] **Treadwell** 2011, p. 155

[40] **Большаков** 1984, с. 168.

[41] Հուստինիանոս Բ-ի դրամներին Քրիստոսի պատկերագրական առանձնահատկությունները տե՛ս **Հովհաննիսյան** 2014, էջ 63–66:

դրամները[42]: 695 թ. Հուստինիանոս Բ-ը ստիպված էր ժամանակավորապես հրաժարվել դրամների այս պատկերագրական պատերազմից, քանի որ զրկվեց իշխանությունից և Բյուզանդիայի գահը վերադարձրեց միայն 705 թ., երբ արդեն խալիֆ Աբդ ալ-Մալիքը լիովին իրականացնելով իր դրամական բարեփումը, մահացել էր:

Կայսեր երկրորդ գահակալության թողարկումները պատկերում են Քրիստոսին կարճ գանգուր մազերով և փոքրիկ մորուքով, այսպես կոչված ասորապաղեստինյան պատկերագրական տեսակը, որը նաև կոչվում է պատմական: Տիրոջ կերպարի երկու տարբերակներն էլ տարբերվում են կատարման ոճով. առաջինը ավելի անտիկ ավանդույթներին է մոտ՝ շնորհիվ մարմնի ձևի պլաստիկ մշակման, երկրորդը՝ համեմատաբար պայմանական և սխեմատիկ:

Քրիստոսի պատկերին ուղեկցող թագավորների թագավոր տիտղոսը կրկնվում է, ինչպես նախորդ թողարկումներում, սակայն Փրկչի անվանն այժմ նախորդում է D[ominus] N[oster] հապավումը (dN IhS ChS REX REGNANTIUM): Այս արտահայտությունը կիրառվել է ուշհռոմեական և բյուզանդական դրամներում կայսեր անունից առաջ և նշանակել է Մեր տերը: Այս մանրամասները ցույց են տալիս, որ Բյուզանդիայի կայսրերը, Քրիստոսին ներկայացնելով կայսերական տիտղոսներով, փորձում էին Աստծու Որդուն հավասարացնել իրենց կարգավիճակին: Դա առավել լավ արտահայտված է Հուստինիանոս Բ-ի երկրորդ դրամներում, ուր կայսրը հանդես է գալիս իբրև Հիսուսի երկրային մարմնավորում: Դա Հռոմի ուշ անտիկ դրամների պատկերագրական ավանդույթների յուրատեսակ վերածնունդ էր, երբ Գ–Դ դդ., կայսրերը իրենց նույնացնում էին Արևին (Sol): Հուստինիանոս Բ-ը դրամների վրա մտցրեց Քրիստոսի պատկերի ասորապաղեստինյան տեսակը, որը փոխարինեց Պանտոկրատոր-Ամենակալի պատկերագրությանը: Դա ավելի էր համապատասխանում երկնային Տիրոջ պատմական գոյությանը, որն ընդգծված էր D[OMINUS] N[OSTER] (Մեր Տերը) բնորոշման մեջ: Երկրորդ շրջանի դրամներում Քրիստոսի թե՛ կերպարը, թե՛ տիտղոսները ավելի երկրային են դառնում, մոտենալով կայսեր

[42] **Miles** 1967, p. 227:

կարգավիճակին: «Անպարտելի Արեգակի (274–275 թթ. կրկնակի անտոնիոնոսներում[43]) և Քրիստոսի (705–711 թթ. սոլիդներում) դեմքերը կայսերական դիմանկարի անվիճելի կրկնօրինակներն են, որոնք կրկնում են նախատիպի տիպաբանական առանձնահատկությունները. մի դեպքում նրա (կայսեր) կենդանի ֆիզիոգնոմիկան, մյուսում՝ պայմանական դիմային հատկանիշների ամբողջությունը: Հռչակվելով կայսրության տիտղոսակիր գլուխ՝ նրանք դառնում էին գործող միապետների գործընկերը, ուղեկիցը (comes Augusti) և անձնական հովանավորը՝ նրանց հետ ազգակցելով դիմապատկերային նմանությամբ և իշխանության հավասար աստիճանով»[44]: Այս երկրորդ թողարկման պատկերագրությունը համահունչ է Սան Վիտալիուսի 547 թ. խճանկարի և Բերբերինիի Զ դ. դիպտիխի Հիսուսի պատկերին, որոնք վերաբերում են Հուստինիանոս Ա-ի ժամանակաշրջանին: Կարծում ենք, Քրիստոսի պատկերի այս երկրորդ տիպի ընտրությունը աղերսվում է Հուստինիանոս Ա կայսեր անվան կրկնության հետ, որը Բյուզանդիայի մեծագույն կայսրն էր համարվում:

DOMINUS NOSTER ընդհանուր տիտղոսը, որը երկրորդ տիպի դրամներում կրում էր թե՛ Քրիստոսը, թե Հուստինիանոս Բ կայսրը ձևավորում էր Աստծու Որդու և կայսեր պատկերագրական ընդհանուր ընկալում: «Ը դ. բյուզանդական դրամները բացահայտեցին աստվածության և տիրակալի «անձնական միասնականության» մասին նախաքրիստոնեական գաղափարների կայունությունը, որը մասամբ վերածվեց քրիստոմիմեսիսի[45] բյուզանդական տեսության և պրակտիկայի մեջ»[46]: Քրիստոնյա կայսրն իր պետական կյանքում ձգտում էր լինել Փրկչի միակ սրբապատկերը, նրա կենդանի ներկայության մարմնավորումը:

Հուստինիանոսի հաջորդները ոչ միայն անտեսեցին քրիստեմիմեսիսը և Քրիստոսի պատկերը, այլև պատկերամարտությունը

---

[43] Հռոմի Գ դարի արծաթե դրամի անվանում:

[44] **Бутырский** 2021, с. 66.

[45] Քրիստոմիմեսիս՝ նմանեցում Քրիստոսին, նրա կենդանի պատկերի ստեղծում:

[46] **Бутырский** 2021, с. 67.

ընտրեցին որպես ճանապարհ վերջնականապես հաստատելու կայսերական իշխանության գերակայությունը եկեղեցու հայրերի նկատմամբ: Եթե Հուստինիանոս Բ-ի առաջին կառավարման շրջանի դրամները ուղղված էին արտաքին հակառակորդի դեմ, ապա՝ երկրորդ կառավարման թողարկումը պետք է նշանավորեր 10 տարի անց նրա հաղթանակած վերադարձը և երկրորդ անգամ Բյուզանդիայի գահին տիրանալը:

Պատկերամարտության շրջանի դրամների բնորոշ առանձնահատկությունները

Հիմնվելով Վ. Պենայի և Գ. Օստրոգորսկու աշխատանքների վրա, Մ. Վրիյը գրում է. «Հզոր կայսրության խորհրդանիշն ու հայելին, անկյունաքարն ու զենքը՝ բյուզանդական դրամը դարձավ կայսերական իդեալը նախագծելու և կայսերական քաղաքականությունը խթանելու կատարելագործված միջոց: … Լևոն Գ-ի հակադրությունը սրբապատկերների պաշտամունքին սկիզբը դրեց ճգնաժամի, որը բնութագրեց այս դարաշրջանը և ավելի քան մեկ դար կայսրությունը դարձրեց ներքին պայքարի դաժան թատերաբեմ»[47]: Հետաքրքիր է, որ թե՛ քրիստոնեական, թե՛ մահմեդական աղբյուրները պատկերների մերժման, պատկերամարտության հետևում տեսնում են հրեական ավանդույթի ազդեցությունը[48]:

Ն. Ադոնցը գրում է. «Արաբական խալիֆ Օմար Բ (717–720) և Բյուզանդիայի կայսր Լևոն Գ-ը (717–741) միաժամանակ հանդես են գալիս պատկերների դեմ, ոչ անշուշտ, միևնույն և ընդհանուր պատճառներից դրդված և ոչ մեկը մյուսի ազդեցությամբ»[49]: Այդ տիրակալներից յուրաքանչյուրն, նման քաղաքականություն վարելիս, իրենց նպատակներն էին հետապնդում: Օմար Բ խալիֆն օմայան կառավարողների մեջ միակն էր, որը որոշակի կրոնական քաղաքականություն էր վարում: Նրա օրոք ամրագրվեց պատկերների ար-

---

[47] **Vrij** 2016, p. 5.
[48] **Ադոնց** 2003, էջ 20; **Duggan** 2012, p. 62.
[49] **Ադոնց** 2003, էջ 19:

գելքը: Օմար Բ-ը կրոնապաշտ անձնավորություն էր և իր պատկերամարտական գործողություններով առանձնակի քաղաքական նպատակներ չէին հետապնդում, այն դեպքում, երբ Լևոն Գ Իսավրացին ծավալեց պատկերամարտությունը՝ հասնելով եկեղեցու նկատմամբ կայսեր իշխանության գերակայությանը: Դա երևում է նաև Լևոնի հրամանագրից ընդդեմ պատկերապաշտության, որտեղ հայտարարում է, որ ինքը թե՛ կայսր է, թե՛ նվիրապետ[50]: Լևոնը նախանձով էր նայում արաբ խալիֆներին, որոնց ձեռքում կենտրոնացած էր կրոնական և աշխարհիկ իշխանությունը, իսկ Բյուզանդիայի կայսրերը ստիպված էին շարունակ հաշվի նստել եկեղեցու հայրերի հետ:

Ոսկի դրամների պատկերագրությունը մեծ չափով չփոխվեց, քանի որ պատկերամարտ կայսրերը ցանկանում էին պահել միջազգային շուկայում բյուզանդական ոսկու, որպես համաշխարհային արժույթի, տեղը : Դրամի նկատմամբ ավանդական վստահությունը հաճախ պայմանավորված է նաև դրամի կայուն պատկերագրությամբ: Ոսկի դրամները նախկինի պես պատկերում էին կայսրերին և նրանց գահակից ազգականներին կամ ժառանգներին: Բյուզանդիայի դրամական տնտեսությունում նախկինի պես, մեծ տեղ էին զբաղեցնում պղնձի թողարկումները: Մ. Վրիյը գրում է. «…արծաթի թողարկման կենտրոնական վերահսկողությունը շատ ավելի թույլ է թվում, քան ոսկունը կամ հիմնական մետաղներինը (նկատի ունի պղնձինը – Ա.Զ.): Արծաթե դրամի պատկերագրությունը հիմնականում նկատվել է առևտրական, զինվորական դասերի և քաղաքացիական ծառայողների կողմից, վերջիններս դեռևս այս ժամանակաշրջանում մասամբ արծաթով էին վճարվում»[51]:

Թեև Լեոն Գ-ի գահակալության առաջին երեք տարիները ցույց են տալիս, որ դրամը շատ քիչ է օգտագործվել «քաղաքական հայտարարություններում», սակայն 720 թ. սկսած հայտնվում են նորամուծություններ, որոնք արտացոլում են կայսեր կենտրոնաձիգ քա-

[50] **Ադոնց** 2003, էջ 21:
[51] **Vrij** 2016, p. 66.

ղաքականությունը և պատկերամարտությունը որպես դրա գործիք օգտագործելու միտումները:

Լևոն Գ-ն իր պատկերամարտական պայքարը սկսել է նոր տիպի՝ արծաթե միլիարեսիոնների թողարկմամբ: Դրանց դիմերեսին ներկայացված է մեծադիր խաչ, որն ուղեկցվում է «Հիսուս Քրիստոս հաղթող» գրությամբ: Նախկինում, բյուզանդական դրամների վրա, երբեք, չէր եղել չէր եղել միայն գրություն պարունակող հորինվածք: Թեև միլիարեսիոնի ներդրումը հետապնդում էր նաև գործնական և տնտեսական նպատակ, սակայն դիմերեսի գրությունն ինքնին արդեն փաստում է, որ դրամը օժտված է եղել քարոզչական գործառույթով: «Հիսուս Քրիստոս հաղթող» արտահայտությունն առաջին անգամ հանդես է գալիս դրամներում: Ավելի ուշ, երբ արծաթե դրամների թողարկումն աստիճանաբար նվազում և դադարում է, նույն գրությունը հանդես է գալիս բյուզանդական պղնձե դրամների՝ անանուն ֆոլիսների դարձերեսին՝ իր տարբեր ձևերով (IC XC NI KA):

Լևոն Գ-ի սկսած՝ «պատկերի դեմ պայքարի» նոր պատկերագրությունը, այդ քաղաքական դոգմատի ամենավառ դրսևորումներից մեկն է եղել: Լևոն Գ-ի որդեգրած պատկերամարտության գաղափարախոսությունը համարվում էր իսլամական կրոնի աշխարհընկալման ընդօրինակություն: Հայտնի է կայսեր ունեցած մեծ համակրանքը արաբական մշակույթի նկատմամբ, որի պատճառով պատմիչ Թեոփանեսը նրան բնութագրում է իբրև սարակինոսներից ներշնչված, ազդված գործիչ:

Լևոն Գ-ի միլիարեսիոնների դարձերեսին հինգ տող ունեցող գրություն է, որը հիշեցնում է արաբական հետռեֆորմյան դրամների արտաքին տեսքը: Սակայն արաբական դրամների գրություններ-ը բացառապես կրոնական բովանդակություն ունեն, որոնցում բացակայում է անգամ խալիֆների անունները: Բյուզանդական դրամներին, ընդհակառակը, ոչ միայն կայսեր անունն է ներկայացվում, այլ նաև նրա որդու. «Լևոն և Կոստանդին, Աստծո շնորհով, թագավորներ»: Արծաթե դրամների գրությունն արտացոլում է Բյուզանդիայի համար մի շատ կարևոր հիմնախնդիր՝ ժառանգական իրավունքը, որը կայուն ինստիտուտ չէր, քանի որ Բյուզանդիան հայտնի էր իր պալատական հեղաշրջումներով: Հաճախ կայսրերի իշխանու-

թյան գալուն մեծապես աջակցում էր զինվորական վերնախավը, որը կարող էր հեռացնելով միապետին, նրա տեղը բերել մեկ ուրիշին իր միջավայրից, ով հեղինակություն էր վայելում զինվորների շրջանում:

Լևոն Գ-ից հետո գահը պետք է խաղաղ անցներ նրա որդուն՝ Կոստանդին Ե-ին, սակայն նրա փեսա Արտավազդ զորավարը գահը գրավեց 741 թ.: Կոստանդինը կարողացավ գահը վերագրավել միայն 743 թ. նոյեմբերին և մեծ ճիգերով վերականգնեց իր հոր պատկերամարտության քաղաքականությունը: Նրա ոսկե սոլիդի դիմերեսին Կոստանդին Ե-ի դիմահայաց կիսանդրին է՝ կարճ մորուքով և «Մեր [Տեր] Կոստանդին» գրությամբ: Դարձերեսը պատկերում է կայսեր հորը՝ հանգուցյալ Լևոն Գ-ին՝ «Մեր Տեր Լևոն հավերժական կայսրը շատ [տարիներ]» գրությամբ: Սա առաջին դեպքն էր, երբ մահացած կայսրը հայտնվում էր բյուզանդական դրամներին որպես կառավարող կայսեր գահակից: Մյուս կողմից, դա խորհրդանշում էր Կոստանդինի հավատարմությունն իր հոր քաղաքականությանը՝ որպես պատկերամարտ: Կոստանդինն իր որդու՝ Լևոն Դ-ի հետ թողարկեց դրամ, կրկնելով իր հոր դրամի պատկերագրությունը:

Որդիներին դրամի վրա պատկերելը նորություն չէր: Այն իր զարգացումն ապրեց Հերակլեոս կայսեր (610–641) թողարկումներում, որտեղ կայսրը պատկերված է իր որդիների հետ: Նկատենք նաև, որ Հերակլեոսն էր, քարոզչության միջոց դարձած, հեքսագրամ արծաթե դրամի թողարկողը, որի դարձերեսին զորավոր խաչ էր պատկերված: Հերակլեոսը, հավանաբար բախվելով արտաքին և ներքին լուրջ խնդիրների հետ, հասկացել է, որ պետք է կայունացնել ժառանգորդության ինստիտուտը, քանի որ կայսրերի հաճախակի փոփոխումը ծնում էր անկարգություններ և քաոսային իրավիճակ: Նույնը նկատելի է նաև Լևոն Գ-ի քաղաքականության մեջ, որը պատկերամարտությունն օգտագործում էր նաև ամրապնդելու ժառանգական իրավունքը: Լևոնի նորամությունն այն էր, որ նա իր ժառանգին պատկերեց ոչ թե ոսկե դրամի դիմերեսին՝ իր կողքին, այլ դարձերեսին որպես գահակից: Հերակլեոսի կառավարումից ի վեր սա առաջին դեպքն էր, երբ դարձերեսի խաչի պատկերը փոխարինվել է կայսեր որդու՝ Կոստանդինի կիսանդրով:

Կոստանդին Ե-ի (741–775) կառավարման մեխը դարձավ իր հոր՝ Լևոն Գ-ի քաղաքականության շարունակումը, որի իմաստը ընտանեկան իրավահաջորդության շեշտադրումն էր: Նա ամեն կերպ փորձում էր ամրապնդել իր հոր սկսած կենտրոնացված իշխանությունը, խուսափել քաղաքացիական անկարգություններից, որոնք բնորոշ էին կայսրությանը նրա և իր հոր գահակալության տարիներին: Կաստանդինն ավելի խորը գիտակցեց կենտրոնացված իշխանության կարևորությունը, որի պարտադիր պայմաններից էր ընտանեկան ժառանգորդությունը: Տոհմային իրավահաջորդության ապահովումը երաշխավորում էր իր ընտանիքի անվտանգությունը: Կայսրական ընտանիքի ժառանգության կարգը մի շարք ձևերով է արտահայտվել, և արտացոլվել է դրամների վրա.

– Առաջին. Կոստանդին Ե-ն գահաժառանգին անվանել է իր հոր՝ Լևոն Գ-ի անունով: Այս պրակտիկան շարունակվել է նաև հաջորդ սերունդների կողմից: Լևոն Դ-ն (775–780) էլ իր որդուն անվանել է Կոստանդին Զ (780–797): Անգամ Լևոն Հայկազնը, որի որդու անունը Սմբատ էր, փոխեց նրա անվանումը՝ դրամներին հիշատակելով Կոստանդին:

– Երկրորդ. ինչպես իր հայրը, Կոստանդին Ե-ը 751 թ. թագադրեց իր մեկամյա որդի Լևոն Դ-ին որպես համակայսր: Հետևելով այս նախադեպին, Լեոն Դ-ը 776 թ. թագադրեց իբրև համակայսր իր հնգամյա ավագ որդի Կոստանդին Զ-ին:

– Երրորդ. Կոստանդին Ե-ը նախաձեռնեց ընտանիքի նախորդ՝ մահացած կայսրերին պատկերելու պրակտիկան իր դրամների դարձերեսին: Այս ավանդույթը շարունակեց Լևոն Դ-ը, որը դիմերեսին պատկերեց իրեն և իր որդի Կոստանդին Զ-ին, իսկ դարձերեսին՝ իր հայր Լևոն Գ-ին և պապ Կոստանդին Ե-ին[52] (նկ. 18):

Կոստանդին Զ-ը (780–797) ինն տարեկան էր, երբ նրա հայրը մահացավ: Հաջորդ տասնամյակի ընթացքում նա կառավարեց իր մոր՝ խնամակալ Իրինեի հետ միասին: Այս շրջանի (780–790 թթ.) ոսկյա դրամները շարունակում են նախկին պրակտիկան. Կոստանդին Զ-ը և Իրինեն դիմերեսին, իսկ նախնիները՝ Կոստանդին Ե-ը,

[52] **Brubaker** 2012, p. 56–57.

Լևոն Գ-ը և Լևոն Դ-ը՝ դարձերեսին: Առաջին անգամ Իսավրյան արքայատոհմի դրամներում հայտնվում է արքայատոհմի կին ներկայացուցչի՝ Իրենեի պատկերը, որպես գահակից կառավարող: 787 թ. սրբապատկերների նկատմամբ քաղաքականության փոփոխությունը որևէ ազդեցություն չունեցավ Իրենեի դրամաթողարկման վրա:

Կոստանդին Զ-ը իշխելու ընթացքում դրամներում պատկերված է անմորուք: Բյուզանդացիների տեսանկյունից անմորուք ցույց տալը նշանակում էր, որ պատկերվածը կրտսեր կայսրն է: Նա շարունակում էր ենթարկվել մորը: Այդ հանգամանքն իր արտահայտությունն է գտել դրամների վրայի գրություններում: «Կոստանդին և նրա մայր Իրինե» մակագրությունը սկսվում է դարձերեսից և շարունակվում՝ դիմերեսին: Այնպես որ Կոստանդինի անունը հայտնվում է դարձերեսին, իսկ Իրենեինը՝ դիմերեսին[53]:

Երբ 790 թ. Կոստանդին Զ-ը հռչակվեց միանձնյա կայսր, նրա անունը հայտնվեց դիմերեսին, իսկ Իրենեինը՝ դարձերեսին: Սակայն երկու տարի անց, երբ Իրենեն կրկին դարձավ գահակից, ոսկե դրամն արձագանքեց նրա փոխված կարգավիճակին. Իրենեն մենակ է պատկերված դիմերեսին, մինչդեռ Կոստանդին Զ-ը պատկերված է դարձերեսին, որտեղ, մինչ այդ, մահացած կայսրերն էին ներկայացվում: Դրամն անմիջապես փոխվեց Կոստանդին Զ-ի մահից հետո: Ոսկե դրամի երկու կողմում պատկերվեց Իրենեն: Բրաբեյքրը նշում է. «Ինչու՞ էր կրկնակի դիմանկարը նախընտրելի, այն դեպքում երբ պոնձի դարձերեսին կա խաչի պատկեր, անհասկանալի է: Այնուամենայնիվ, տրամաբանությունը, ըստ երևույթին, հասկացել են ավելի ուշ շրջանի կայսրերը. կրկնակի դիմապատկերով նոմիսմա են թողարկել Լևոն Ե-ը և Միքայել Բ-ը»[54] (նկ. 19):

Ժամանակաշրջանը, որը հաճախ հայտնի է որպես «երկրորդ պատկերամարտություն», տևել է 815-ից մինչև 842 թ., ընդգրկելով՝ Լևոն Ե-ի (813–820), Միքայել Բ-ի (820–829) և վերջինիս որդի Թեոփիլոսի (829–842) ժամանակաշրջանը: Լևոն Ե-ը անմիջապես չվերակենդանացրեց սրբապատկերների արգելքը, այլ միայն 815 թվա-

[53] **Brubaker** 2012, p. 77–78.
[54] **Brubaker** 2012, p. 79–80.

կանին՝ Մակեդոնիայում և Թրակիայում բուլղարներից կրած պարտությունից հետո: Լևոնը, ըստ հետագա հեղինակների, իրեն կապում էր ծայրահեղ պատկերամարտ Կոստանդին Ե-ի հետ: Լևոն Ե-ի նմանակումը Կոստանդին Ե-ին և նրա հորը՝ Լևոն Գ-ին հատկապես երևում է նրա որդու՝ Սմբատի՝ Կոստանդին վերանվանելու և իր թագավորության սկզբում թողարկած դրամների կրկնակի դիմապատկերից հրաժարվելու մեջ: Նա սկսեց հետևել Լեո Գ-ի պրակտիկային՝ իր որդի Կոստանդինի պատկերը ոսկե դրամի դարձերեսին պատկերելով (նկ. 20):

Թեոփիլոսը (829–842), հավանաբար, պատկերամարտության շրջանի կայսրերից ամենաշատն է ներգրավված պատկերագրության փոփոխությունների մեջ (նկ. 21): Նա կառավարման 13 տարիների ընթացքում հատել է ոսկու և արծաթի տասը տարբեր տիպի դրամներ: Նախ, նա իրականացրեց դրամական բարեփոխում՝ էապես մեծացնելով պղնձե դրամների հատումը: Պղնձե դրամի դարձերեսից վերացավ անվանական արժեքը՝ տեղը զիջելով արծաթե միլիարեսիոններին բնորոշ գրությանը՝ կայսեր և որդու անուններով: Պղնձե ֆոլիսներին արծաթի միլիարեսիոնի ձևը տալով Թեոֆիլոսը ցանկանում էր վերականգնել վաղբյուզանդական դրամական տնտեսության ավանդույթները՝ հիմնված ոսկու և պղնձի վրա, միաժամանակ բարձրացնել ֆոլիսի նշանակությունը նաև միջազգային շուկայում: Այդ մասին կարող է վկայել պղնձե դրամների գրությունը, որը ուղերձ էր. «Թեոփիլոս Օգոստոս, դու նվաճում ես» (ThEOFILE AVG-OVStE SV-nICAS): Հավանաբար, որն առնչվում է Թեոփիլոսի՝ արաբների նկատմամբ տարած հաղթանակների հետ: Իր պատկերագրական մանիպուլյացիաներով Թեոփիլոսը ճանապարհ բացեց իր որդու՝ Միքայել Գ-ի օրոք Քրիստոսի պատկերի վերահայտնվելուն: Նրա կինը Թեոդորան դասվեց սրբերի շարքը՝ պատկերապաշտությունը վերականգնելու համար: Թեոդորա կայսրուհին իր որդի Միքայել Գ-ի հետ թագավորելով, վերադարձավ պատկերների պաշտամունքին, որն անմիջապես դրսևորվեց դրամաթողարկմամբ: Մայր ու որդի թողարկեցին ոսկե դրամներ՝ տեղադրելով Քրիստոսի պատկերը (նկ. 22):

Պատկերամարտության ժամանակաշրջանի դրամները ցույց են տալիս, որ այդ շրջանի Բյուզանդիայի կայսրերի համար առաջնահերթ նշանակություն ուներ ընտանեկան ժառանգական իրավունքի ամրագրումը: Դրամներում ոչ միայն կառավարող կայսրին, նրա գահակից որդին, այլև կայսեր մահացած հորը, անգամ պապին պատկերելով, Իսավրյան կայսրերը ցույց էին տալիս, որ իրենց համար առավել կարևոր է իրենց արքայատոհմի իշխանության ամրապնդումը: Նման պայմաններում կայսեր իշխանությունը ենթադրում էր բացարձակ գերակայություն իշխանական այլ ինստիտուտների նկատմամբ: Կայսեր կախվածությունը եկեղեցու հայրերից, նահանգների կառավարողներից, ռազմական վերնախավից, մայրաքաղաքի աստիճանավոր դասից հաճախ էր Բյուզանդիային կանգնեցնում դժվարին իրավիճակների առաջ: Պատկերամարտությունը դարձնելով գաղափարախոսական հենք, կայսրերը այն ուղղեցին կայսրական իշխանությանը ընդդիմադիր ուժերին ենթարկելու կառավարման կենտրոնացված համակարգին, որի արդյունքում Բյուզանդիայի հոգևոր առաջնորդ պատրիարքները երբեք ձեռք չբերեցին Հռոմի պապին հավասար կարգավիճակ, իսկ ռազմական և պաշտոնյա վերնախավն էլ չձևավորեց ժառանգական իրավունքով օժտված աստիճանակարգության այնպիսի ինստիտուտ, ինչպիսին էր Եվրոպայի ազնվականությունը:

ՊԱՏԿԵՐՆԵՐ

Նկ. 1 Օստգոթերի առաջնորդ Թեոդորիկի դրամը կայսր Զենոնի անունով

Նկ. 2 Կաստանդին Մեծի (307–337) պղնձե ֆոլիսը՝ Քրիստոսի մենագրով https://www.coinarchives.com/a/results.php?search=Constantinus+AND+Victory+AND+Follis

Նկ. 3 Աքսումի թագավոր Էզանասի (330–358) ոսկեջրած պղնձե դրամը https://www.forumancientcoins.com/gallery/displayimage.php?album=249&pid=11822#top_display_media

Նկ. 4 Վալենտինիանոս I-ի (364–367) ոսկե սոլիդը https://www.coinarchives.com/a/results.php?search=Valentinian+I

Նկ. 5 Անաստասիուսի (491–518) ոսկե սոլիդը՝ Վիկտորիայով և խաչով https://www.coinarchives.com/a/results.php?search=Anastasius

Նկ. 6 Հուստինոս II-ի (565–578) սոլիդը Կոստանդնուպոլսի պատկերով https://www.coinarchives.com/a/results.php?search=Justin+II

Նկ. 7 Տիբերիուս II-ի (698–705) սոլիդը՝ դարձ. խաչը աստիճանավոր հիմքին վրա
https://www.coinarchives.com/a/results.php?search=Tiberius+II

Նկ. 8 Հուստինիանոս I-ի (527–565) արծաթե դրամը, դարձ կայսրը լուսապսակով
https://www.cngcoins.com/Coin.aspx?CoinID=58224#

Նկ. 9 Հերակլեոսի (610–641) թողարկած հեքսագրամը
https://www.coinarchives.com/a/results.php?search=hexagram

Նկ. 10 Տյուրոսյան արծաթե ½ ստատերսրբազան շեքելը
https://www.coinarchives.com/a/results.php?search=shekel



Նկ. 11 Քրիստոսի մենագիրը 4-րդ դ. սարկոֆագի վրա
https://commons.wikimedia.org/wiki/File:Chrisme_Constantinople.jpg

Նկ. 12 Արծաթե միլիարեսիոն հատված Լևոն III-ի կողմից
https://www.coinarchives.com/a/results.php?results=100&search=Leo+III

Նկ. 13 Կոստանդին VI-ի և Իրենեի միլիարեսիոնը վերահատված օմայան դիրհեմի վրա

Նկ. 14 Աբդ ալ-Մալիքի՝ բյուզանդական տիպի ոսկի դրամը՝ շահադայով
https://www.coinarchives.com/w/results.php?search=Bismilla&s=0&results=100

Նկ. 15 Հուստինիանոս II-ի (698–705) ոսկե սոլիդ, արծաթե հեքսագրամ, ոսկե սեմիսիս, տրեմիսիս դրամները
https://www.coinarchives.com/a/results.php?search=Justinian+II

Նկ. 16 Աբդ ալ-Մալիքի «կանգնած խալիֆ» տիպի ոսկե դրամը և պղնձե դրամը՝ Աբդալլահ գրությամբ
https://www.coinbooks.org/esylum_v18n15a29.html

Նկ. 17 Հուստինիանոս II-ի (698–705) 2-րդ իշխանության շրջանի ոսկե սոլիդ
https://www.coinarchives.com/a/results.php?search=Justinian+II

Նկ. 18 Լևոն III-ի, Կոստանդին V-ի, Լևոն IV-ի դրամները
https://coinweek.com/coinweek-ancient-coin-series-coins-of-the-iconoclasts/

Նկ. 19 Կոստանդին VI-ի և Իրենեի դրամները
https://coinweek.com/coinweek-ancient-coin-series-coins-of-the-iconoclasts/

Նկ. 20 Լևոն V Հայկազնի դրամները
https://coinweek.com/coinweek-ancient-coin-series-coins-of-the-iconoclasts/

Նկ. 21 Թոեֆիլոսի դրամները
https://coinweek.com/coinweek-ancient-coin-series-coins-of-the-iconoclasts-part-ii/

Նկ. 23 Թեոդորա կայսրուհու և Միքայել III-ի դրամները
https://www.coinarchives.com/a/results.php?search=Theodora